նաց ա՟մ հաւատացելոց. զկամայից



և

եւ զակամայից․ Ը̅ աջմէ քումմէ դա-
սեա՛․ եւ զերանականն զձայնն ’ի լսելիս
ա̅մ հաւատացելոց աւետարանեա՛ ա-
սելով․ եկա՛յք օրհնեալք հօր իմոյ՝
ժառանգեցէք զյաւիտենից բարութիւնս։

(Ղ՛Ս)

Տէրդ՝ տ̅ր իմ եւ ա̅ծ իմ յ̅ս ք̅ս՝ բա-
րերար ողորմած եւ մարդասէր՝ անո-
խակալ եւ անյիշաչար՝ ընկա՛լ զաղօթս
եւ զխնդրուածս իմ․ ո՛վ պաղատիմ
եւ հայցեմ ’ի քէն վ̅ս իմ եւ վ̅ս ա̅մ
հաւատացելոց․ մի՛ դարձուցաներ
զերեսս քո ’ի ծառայէս․ այլ խոնար-
հեա՛ յաղաչանս իմ․ եւ լո՛ւր ինձ մար-
դասէր․ եւ ցո՛յց ինձ զսովորական քո
մարդասիրութեանդ զողորմութիւն․ եւ խնայ-
եա՛ ’ի մեղուցեալ ծառայս քո։
Այլ կարգեա՛ զիս Ը̅ աջմէ դասուն․
եւ մի՛ կացուցաներ ’ի ձախմէ ընդ-
ուլսն՝ որք զայրացուցին զքեզ․ եւ մի՛
պահանջեր յինէն զանհամար պար-
տիս յանցանաց իմոց։ Այլ մի՛ դատա-


պար

պարտէր զմեղաւորս յայնժամ. և մի՛
յայտնեսցին ծածուկ գործք ամ-
բարշտութե̃ իմոյ յանցանաց յանաշխա
ատենին՝ հրեշտակացն տեսանողաց
և հրեշտակապետացն և ա̃մ սր̃բց քոց
սիրողաց. այլ յաղթեալ 'ի քումմէ
մարդասիրութե̃դ արասցես այցելութի̃
մեղուցեալ ծառայիս քո. և մի՛ ըստ
չար գործոց իմոց հատուսցես ինձ։
Այլ մի՛ հրամայեր կապեալ ոտիւք և
ձեռօք հանել 'ի խաւարն արտաքին.
ուր լալ աչաց է և կրճտել ատամանց.
այլ ըստ քում գթութե̃դ և բա-
րերարութե̃դ և անյիշաչարութե̃դ՝
ողորմեա ինձ բազմամեղիս։
Յայնմ աւուր զերծո՛ զիս յամօթոյն
յաւիտենից. և փրկեա՛ զիս յանվախ-
ճան տանջանացն. ապրեցո՛ զիս յան-
ներելի պատուհասիցն՝ և բա՛ց ինձ
զդուռն ողորմութե̃ քո. և մի՛ փակեր
զդուռն արքայութեան տ̃ր իմ տ̃ր՝
ա̃ծ իմ ա̃ծ յ̃ս ք̃ս։

Արժանի՛ արա զիս զանարժանս յա-
ւուրն յայնմիկ երանութեանց և անա-
պականութեան պարգևաց լուսոյ. և
անապատ յաւիտենից ուրախութեանց.
և բարեաց հատուցմանց սրբոցն և ար-
դարոցն. և զփառս երանելեացն վայե-
լել միշտ: Ով մեծ արժանապէս
յառագաստ անմահ փեսայիդ. և ժա-
ռանգեցից զանապատ բարիսն ընդ
ամենայն սրբս քո՝ մաքուր և յստակ և սրբ
սրտիւ՝ համարձակ երեսօք: Անհատ
տեսից զքեզ ընդ հրեշտակս. և ընդ
սուրբ սիրողս վայելեցից զանհատ զանձա-
ռելին և զանեզր լոյս Երրորդութեանդ՝
գոհանալով: և զուգահաւասար ա-
ռասցես ընդ սուրբս քո յօրհնաբանութիւն
միշտ արժանապէս. հանապազ ածային
անստուէր լուսով քո պայծառացօ:
Այլ անդադար երգով փառաւորե-
ցից զամենասուրբ Երրորդութիւնդ.
այժմ և յաւիտեանս յա-
ւիտենից Ամէն:



Տէր

Նորին դարձեալ Աղօթք սրբոյն Եփրեմի Ասացեալ առ Տէր Աստուած։

Բ

Տէր զօրութեանց՝ աղաչեմ զքո բարերարութիւնդ․ ժտեմ և հայցեմ ՚ի քէն․ տուր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին․ ապրեցուցիչ ինձ ՚ի հրեղէն ծովէն և յանդնդային հրահոսանցն․ յանշէջ արգելանէն և յանհընարին վտանգիցն։ Զի դու ես Տէր Աստուած՝ որ զլանդ Աստուածային ծածկեցեր և ՚ի ծառայական կերպս իջեր վասն իմ․ զլեղի ՚ի քիմս առեր և ապտակ ՚ի ծնօտըս ընկալար։ Արդ այժմ աղաչեմ զքեզ՝ ազատեա զիս ՚ի դառն ծառայութենէն սատանայի․ զի յորժամ զձեռս իմ ՚ի վեր ունելով աղօթեմ, անօրէն սատանայ խաբէ և ունայն հանէ զիս ՚ի յաղօթից իմոց։ Տուր ինձ Աստուած բերդ ամուր․ և կորզեա զիս յառիւծոյն որ հանապազ կամի կլանել զիս։

Զի ընդ պիտանիան փառաւորեցից ՚ի բարձունս զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Նորին աղօթք սրբոյն Եփրեմի. պէս պէս Հայցուածովք.

Գ.

Տէր յ՜ս ք՜ս երկնի և երկրի. իշխան կենաց և մահու. դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Ք՜ս ա՜ծ յոյս և ապաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւն և մատուցանեմ զփառաբանութիւն մաղթանաց։ Լո՛ւր պարգևիչ հայցուածոց իմոց՝ որ միայն ես առանց մեղաց. որ միայն ես ս՜բ և ՚ի ս՜բս հանգուցեալ. որ միայն ես գթած և ողորմած։

Ողորմեա՛ ինձ ա՜ծ ը՜ս մեծի ողորմութեան քում. և ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Մտերմիկ իմ ողորմեա ինձ և օրհնեա զիս. երևեցո զերեսս քո առ իս և հաշտեա ընդ իս։ Մերձեցուցիչ իմ դարձ առ իս և երևեցո զերեսս քո և լիցեա զիս յարքայութեան քում։ Դարձ առ իս Աստուած փրկիչ իմ. և դարձո զսրտմտութիւնս քո յինէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։ Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս. և մի՛ սրտմտութեամբ քում յանդիմաներ զիս։ Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ յիշեր զչարիս իմ. և մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս։ Մի՛ իսպառ բարկանար ինձ. և մի՛ յաւիտեան պահեր ոխս։

Մի՛ ըստ մեղաց իմոց առներ. և մի՛ ըստ անօրէնութեանս իմում հատուցաներ ինձ։ Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. և մի՛ խնդրեր զգիր յանցանաց իմոց. և մի՛ դատապարտեր զիս։ զի ես ինձէն գիտեմ որ անուղղայ եմ և յանցաւոր



Ի

'ի մանկութենէ. և անպատասխանի եմ յամին:
Այլ դու դատաւո՛ր հզօր և անոխա-
կալ. որ զյանցանս Թողեր անառակ
որդւոյն՝ Թո՛ղ և ինձ զպարտիս մե-
ղուցեալ և անօրինեալ քո ծառայիս:
Քանզի քո առատ բարերարութիդ
յայնժամ երևեսցի, յորժամ ինձ ողոր-
միս. որ չե՛մ արժանի ողորմութեան քում,
յորժամ յիս ցուցանես զերկայնմտութիւն
քո. որ արժանի եմ բիւրուց տան-
ջանաց. զի զամենայն ա՛ւուրս իմ անառա-
կութեամբ անցուցի և ո՛չ կացի
'ի հրամանի քում:
Արդ քաղցրեցիր ինձ բա՛րի և քաղցր
Թագաւո՛ր. և հաշտեա՛ց ընդ բազում
մեղիս. և մի՛ դարձուցաներ զերեսս
քո յինէն. և մի՛ խոտորիր բարկութ
'ի ծառայէ քումմէ:
Մի՛ հայիր յանհնազանդութիւնս իմ և
'ի պղերգութիս: Մի՛ անարգեր զիս
և մի՛ Թողուր զիս. և մի՛ ընդ վայր
հարկաներ զիս: զի Թէպէտ ես զառա

ճար հոգւոյդ մեղօք ապականեցի խմով
ծուլութեամբս և անառակ գնացիւքս,
այլ դու գթա՛ յիս առեղծիչ իմ ողոր
մած և անյիշաչար. և մի՛ ապականեր
զհոգի իմ գեհեննաժառանգ մեղ-
մամբ յաւիտենականաւ:

Այլ գթացեալ մարդասիրապէս՝ եր
կայնամիտ լեր առ իս. և ներեա՛ յան
ցանաց իմոց: Այլ շնորհեա՛ ինձ ժա
մանակ ապաշխարութե̃ և զղջման ար
տասուաց. և տո՛ւր իմաստութի̃ւ խոր
հիլ զօրէնս քո ՚ի տուէ և ՚ի գիշերի.
գործել զբարի և առնել զարդարու
թիւն առաջի երեսաց քոց:

Համբառնամ առ քեզ տ̃ր զաչս իմ
բոլորով սրտիւ իմով. կարդամ առ
քեզ ք̃ս ա̃ծ միածին որդի ա̃յ՝ կեր
պարան անեղին և համագոյ ս̃բ հո-
գոյն: Որ յաղթե̃լ ՚ի մարդասիրութե̃դ
քումմէ, կամաւ խոնարհեցար յան
ձառ փառացդ և առեր զծառայի կեր
պարանս. և անպարտականդ՝ յաղագս

դատաստանաւն մերոյ համբերեցեր մին-
չեւ զչարաչարինս խաչի և մահու յանձն
առեր վասն փրկութեան ստեղծուածոց քոց:
Տէր՝ որ զայսպիսի սէր ունիս առ
ազգս մարդկան՝ և կամիս զի ամենայն
մարդ կեցցէ և ՚ի գիտութիւն ճշմարտութեան
եկեսցէ, գթա՛ և լի՛ս ՚ի բազմամեղս
գթած և մարդասէր տէր. և կամեցա՛յ
ընդ իմ փրկութիւն և արա՛ ինձ ողոր-
մութիւն եղկելոյս և թշուառականիս.
որ առաւել վիրաւորեալ եմ և ողոր-
մելի քան զամենայն մարդիկ: Ոչի ո՛չ և
մի օր սիրեցի զքեզ ՚ի բոլոր սրտէ
իմմէ. և ո՛չ մի ժամ յամենայն զօրութենէ իմ-
մէ պահեցի զպատուիրանս քո. այլ
ողերգութեամբ և զբօսանօք անցուցի
զաւուրս իմ. և աղտեղի խորհրդովք
անցուցի զամենայն կեանս իմ: Աւուրք իմ
պակասեցան և անօրէնութիւնք իմ բարձ-
րացան. և ո՛չ գոյ ինձ յոյս փրկութեան և
տեղի ապաւինի. բայց միայն յուսա-
ցեալ եմ ՚ի քո բարերարութիւնդ, և ապա-
ւինեալ յառատ ողորմութիւնդ,

Եւ արդ՝ անկեալ բղխմամբ ար-
տասուաց աղաչեմ զքեզ. պաղատիմ
մինչև եմ կորուսեալ. և մինչև է
ժամանակ դարձի իմոյ հասեալ. շնոր-
հեա՛ ինձ ապաշխարութիւն. և յառաջ քան
զվախճան արձակեա՛ զիս ՚ի կապանաց
մեղաց իմոց. և անտես արա զան-
թիւ անօրէնութիւնս իմ:

Որ ամենայն բարութեանց ես տէր. և իշխանդ
ես թողուլ զմեղս՝ ծածկեա՛ զամենայն
անօրէնութիւնս իմ քոյով մեծութեամբդ.
և մխիթարեա՛ զվշտանկեալ և զտա-
րակուսեալ հոգի իմ: Եւ արժանա-
ւորեա՛ զիս յայսմ հետէ ըստ կամաց
քոց քաղաքավարել զայլ ևս պան-
դխտութեան իմոյ ժամանակս. եթէ
չկամիմ, բռնադատեա՛ զիս. և մի՛
թողուր ՚ի կամս անձին իմոյ. մինչև
տարեալ հասուցես յօթևանս ար-
քայութեանդ երկնից:

Լուր տէր աղօթից անարժան ծա-
ռայիս քո. և պաղատանաց իմոց


ան

ունկնդիր։ Որ ասացեր թէ՝ հայցե
ցէք և գտջիք. բախեցէք և բացցի
ձեզ։ Ահա՛ այժմ բա՛ց ինձ տէր զդրունս
ողորմութեան՝ որ ողբալով կարդամ առ
քեզ. և մի՛ անտես առներ զաղաչանս
մեղուցելոյ անձին իմոյ։ որ ոչ եկիր
կոչել զարդարս. այլ՝ զմեղաւորս
յապաշխարութիւն։

Որդի՝ խոնարհեալ անձամբ, բեկեալ
սրտիւ, և ամօթալից երեսօք, անկա
նիմ առաջի քո. չեմ արժանի կոչիլ
որդի քո. վասն ապականեալ վարուց
իմոց. և ոչ անուանել զանուն քո՝
զարշ և աղտեղի բերանով իմով։

Այլ համարձակիմ ՚ի գթութիւն քո. զի
գիտեմ զքեզ քաղցր և անոխակալ՝
բազմախնամ և երկայնամիտ առ ա
րարածս քո. և յաղագս այսորիկ ժը
տելով պաղատիմ առ քեզ։ Ահա յառաջ
քան զդնել ատենին աղաչեմ. և նախ
քան զփակել դրանն ապաշխարութեան
և հատանել անդարձ վճռին՝ զարտա


սուս

սուս իմ արկանեմ առաջի անոխակալ
գթութեանդ քո ո՛ղորմած Տէր․ երկայ-
նամիտ քաղցր և անյիշաչար։
Մի՛ ընդ քանքարաթաղոյցն դատա-
պարտեր զիս․ և մի՛ ընդ յիմար կուսանան
փակեր ինձ զդուռն արքայութեան քո։
Մի՛ ընդ չար և վատ ծառայիցն զիս
ընկեցեր․ և մի՛ ընդ հերձուածողսն
դներ զբաժին իմ։
Մի՛ ընդ պոռնիկսն և ընդ չարա-
գործսն կորուսաներ զիս․ և մի՛ ընդ
ախտաւորսն և ընդ շաղախեալսն հո-
գւով հաներ զիս ի կենաց։
Բայց զերծո՛ զիս յանզերծ տանջանացն
և ապրեցո՛ յանհանգիստ ալէկոծու-
թեանցն։ Փրկեա՛ անմահ ի մահո-
ճանէ․ և ազատեա՛ ի յաւիտենական
ամօթոյն․ զերծո՛ ի միշտ լալոյն և
հանապազորդ ողբալոյն։
Մի՛ մերժեր զիս ի քո դասուցն․
և մի՛ տարագիր առներ յերանաւէտ
կենացն։ Մի՛ անբաժին հաներ զիս
ի

'ի հայրենի ժառանգութենն . և մի'
զրկեր զիս յերկնաւոր հարսանեացն:
Մի՛ կարօտ պահեր զիս 'ի քո անձա
ռելի տեսութենդ . այլ շնորհեա ինձ
ընդ արժանաւորսն, և ընդ կատարել
ոգիսն , վերանալ լուսեղէն ամպօք
ընդ առաջ քո յօդս . և պարզ երես
և աչալրջութբ կալ առաջի քո :
Այ վն քո փառաւորեալ հզօր և
ահեղ Թագաւորութեդ , մի' մատներ
'ի դատաստան ընդ ծառայիս քո .
և մի' հատուցաներ ինձ ըստ իմում
անօրէնութես . և մի' ամաչեցուցաներ
զիս առաջի անթիւ և ահաւոր բա
նակաց քոց : Այլ ողորմեա ինձ
զի ոչ ոք է հակառակ քեզ . և պար
գևեա ինձ զարքայութիւնդ :
Ընդ սրբս քո դասեա և ընդ արդարսն
պսակեա . ընդ սիրելիս քո օրհնեա և
ընդ կամարարս քո կամաց քոց 'ի յա
րագուարձ ուրախութեան ուրախացո:
Եւ առատապարգև փառօքդ փա
ռա

ռաւորեա՛ զիս տէր ՚ի լուսեղէն ե-
րամս արդարոց՝ ընդ նոսին հանգ-
չել ՚ի վերինդ երուսաղէմ յանսա-
ռէք եւ յանծակեաց ուրախութիւնդ։
Զի ընդ նոսին համաձայնեալ փա-
ռաւորեցից զամենասուրբ Երրորդու-
թիւնդ․ այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից
ամէն ։

Աղօթք յորժամ յորոգայթ անկանի ոք․ Ասացեալ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին։

Դ․

Օրհնեալ է մարդասիրու-
թիւնդ քո տէր իմ եւ փր-
կիչ յս քս ընդէ՞ր լքա-
նես զիս․ դու միայն ես առանց մե-
ղաց․ եւ անուն քո զանոխակալութի եւ
զմարդասիրութի ցուցանէ․ գթա յիս՝
վս զի դու ես միայն մարդասէր։
Եւ

Ապրեցո՛ զիս զանկեալս ՚ի մեղս. զի
դու միա՛յն ես առանց մեղաց։
Հա՛ն զիս ՚ի տղմոյ անօրէնութ՟ե իմոյ
զի ընկղմեցայ յամ̂ խտեանս յամ̂ տնից։
Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց.
քանզի ահա՛ իբրև զառիւծ գոչէ և
մռընչէ կամելով կլանել զիս։
Արդ տ՟ր իմ փոյլատակեա՛ զիայլս
տակմանս քո. և կործանեա՛ զզօրու-
թ՟ի նց. երկիցեն և խամ̂արեսցին յե-
րեսաց քոց. քանզի անկա՛ր է և ո՛չ
ունի զօրութ՟ի կալ առաջի քո տ՟ր. և
ո՛չ առաջի երեսաց սիրողաց քոց։
Տեսանէ զզօրութ՟ի նշ՟նի խաչի քո տ՟ր
և զարհուրի. և ամաչելով իբրև հեռա-
նայ յայնցանէ որ կարդան առ քեզ։
Այժմ տ՟ր կեցո՛ և ապրեցո՛ զիս.
վ՟ն զի ՚ի քեզ ապաւ̂ինեցայ. հա՛ն ՚ի
ներքուստ զանձն իմ. զի մի՛ խայտա-
կորուսցէ զիս նենգաւ̂որն որ մար-
տնչի ընդ իս ծածուկ հնարիւք։
Որ խորհրդոց ես տ՟ր՝ և քննես զս
սիրտս և զերիկամունս՝ սրբեա՛ զս


սիրտ

սիրտ իմ և զխորհուրդս 'ի զազրէ և 'ի պղծ խորհրդոց · զի մի' իսպառ կորայց 'ի յաւիտենական կորուստն:

Որ կարող ես ամի, ողորմեա ինձ ած իմ · տուր շնորհ արտասուաց մեղուցեալ հոգւոյս · ոպ զի լուացից զբազմութի մեղացս · զի ապրեցայց 'ի ձեռաց անողորմ հրեշտակաց որ արկանեն զամբարիշտսն 'ի հուր գեհենին

Երանի թէ լայի հանապազ աղաչելով զքեզ ա'ծ՝ զի մի' անարժան գըտայց 'ի ժամուն յորժամ գայցես և մի' լուայց զահաւոր զձայնն զայն, թէ երթ 'ի բաց մշակք անիրաւութե ոչ գիտեմ ուստի էք:

Ով բարձրեալ միայն առանց մեղաց · շնորհեա ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբազում գթութի քո · զի մի' յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց՝ մարգարէից առաքելոց և արդարոց սրբոց:

Տէ՛ր ապրեցո՛ զիս զամենայնիւրս շնորհօք ողորմութեան քո։ Ընկա՛լ զիս 'ի դրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարսն։ Ընկա՛լ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութեամբ սրբոցն որք հաճոյ եղեն քեզ Յիսուս Քրիստոս Տէրդ մեր։ Եւ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

Նորին աղօթք սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին

Ա

Աղաչեմ զքեզ փրկիչ աշխարհի Քրիստոս · հայեա՛ց յիս և ողորմեա՛ ինձ · փրկեա՛ զիս 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ · քանզի անարգեցի զանուն բարձրեալ զոր արարեր յիս 'ի մանկութենէ իմմէ ։ Զիս զախմարս՝ զտգէտս և զանիմաստս՝ արարեր անօթ լի՛ գիտութեամբ· յաճախեցաց յիս շնորհն քո՝ և լցոյց զքաղց իմ և զծարաւ իմ · զովացոյց և

և լուսաւորեաց զխաւարեալ միտս
իմ. և ժողովեաց 'ի մոլորուէ զխոր
հուրդս իմ, և ելից 'ի ծոց իմ:

Այժմ երկրպագանեմ և աղաչեմ,
անկանիմ և հայցեմ խոստովանելով
զքումդ բարերարուէդ. կատարեա՛
յիս զխոստումն շնորհի քո և պահեա՛
զիս 'ի գանձի քում. զի դարձեալ
տացես ինձ յաւուրն յայնմիկ:

Մի՛ բարկանար ինձ մա՛րդասէր.
զի ոչ հանդուրժեմ սպառնալեաց
քոց. յաղագս այսորիկ աղաչեմ ժպ
տելով՝ զի առաւել քան զչափն յա
ճախեաց յիս. վն զի լեզու իմ տկա
րացաւ ոչ կարելով խօսել զշնորհս
քումդ: հիացան և միտք իմ ոչ բե
րելով զբազմութի ալեաց նորա:

Կե՛րպարան և ճառագայթ օրհնելոյ
հօրդ՝ դադարեցո՛ ալիս 'ի հոսանաց
նորա. զի լեբրև զհուր բորբոքեալ
բոցակիզէ զերիկամունս իմ և
զսիրտ իմ: Անդր դարձեալ պար


գև

գեղեալ լինձ զնա և կեցո զիս յաղքոյ
ութեան քում . մի՛ մերժեր զանօրէ-
նութիս իմ . յանդգնիմ՝ հայցեմ տուր
ինձ զխնդրուածս իմ. և արա օթևանս
օրհնել հարթ քո յաւուր յայտնութեն:
Շնորհեա ինձ Քս զհայցուածս իմ.
զի դու միայն ես տուօղ կենաց իմոց:

Եւ քեզ փառք յաւիտեանս
յաւիտենից
Ամէն:

Սրբոյն Աթանասի Եպ՛ սրբոյն արբայ Եփրեմի
Ասացեալ Խոստովանութի: 34:

Եւ արդ՝ հրաժարեմ 'ի սա
տանայէ՛ և յամ խաբէութէ
նր, 'ի պաշտօնէ նր 'ի գնացից
նր. և 'ի պաշտօնէից նր և 'ի հրեշտակաց
նր. եկեալ առաջի սբ եկեղեցւոյ՝ խոս
տովանիմ և հաւատամ զհայր անսկիզբն՝
զորդին միածին ծնունդ 'ի հօրէ,
և զսուրբ հոգին բղխումն 'ի հօրէ:
երեք անձամբ և մի՛ բնութբ և մի՛
ած

աստուածութեան, անշփոթ միաւորութեան:

Վասն զանձառ տնօրէնութեան մարդացելոյ Բանին Աստուծոյ:

Վասն արդ՝ ես գերիս և արտասուելիս և որքան բան զօրէ դարովելիս՝ մեղայ ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: մեղայ և սրբուհւոյ աստուածածնին և սրբոց հրեշտակաց և ամենայն ընտրելոց սրբոց դասուց, մեղայ և սուրբ մարմնոյն քո և պաշտելի արեանն: յիմանալիսն և ի զգալիս, անդէպ մտածութեամբ աներևոյթ սխալանօք. անձառ խաւարային այլանդակ խորհրդով: Մեղայ մեղայ և հոգւովս և մարմնովս և մտօքս՝ և բանիւ՝ և գործով՝ և գիտութեամբ և անգիտութեամբ կամաւ և ակամայ:

Վասն ամենայն մարմնովս, յկե զօդուածովքս, երկոտասան անդամօքս, ե զգայութեամբքս: Աչօքս յարատ հայելով, և զամենայն գեղեցկութիւն նկարացն զննելով, և զվատթարան տեսանելով: Ականջօքս՝ չարէն

ուն

ունկնդնելով. և ա՟մ քաղցրաձայնութե՟ն:
Հոտոտելեօքս՝ զմեղաց հոտն առնլով
և զի՟մ անուշահոտութիւնս:
Բերանովս՝ զհամագամ քաղցրու-
թիւնսն ճաշակելով, և զխաւունակ և
զանմբան անգիտութե՟: Ձեռօքս բա-
զում մեղս շօշափելով: Ոտօքս յան
պատշաճ տեղիս գնալով: Մեղայ ա՟յ
մեղայ և վեց շարժմամբս ՚ի վեր հը-
պարտութե՟, ՚ի վայր տրտմութե՟:
Յառաջ յանդգնութե՟, յետուստ
սրտմտութե՟: Յաջ հոգեկան մեղօք,
ձախ՝ մարմնական մեղօք:
Մեղայ և տասն պատգամացն ա՟յ՝
յանձնեկանին և հրամայականին:
զանձնառականն չեմ կատարեալ, և
զհրամայականն եմ արարեալ:
Մեղուցեալ եմ ա՟յ և հոգևորական
կրիւքս, հարկի զգայութե՟ս և մօրքս:
և ա՟մ շփոթմանց հետևելով, և ամբո-
խելով զիս ՚ի յա՟ծահաճոյ հանդար-
տութենէն հեռացեալ եմ:

Եւ այսպէս խաւարամած լինելով
է մահու չափ մեղօք մոլորեալ եմ:
Հպարտութբ, ամբարտաւանութբ,
ամբարհաւաճութբ, գոռոզութբ, ան‿
փառութբ, փառասիրութբ, պատուա‿
սիրութբ, զգեստասիրութբ, պճնելով,
անձնահաճելով, կեղծաւորելով,
սուտ առաքինի ձեւանալով, զաղօթս
՚ի ցոյցս մարդկան առնելով անարժա
նութբ յեկեղեցի մտանելով ՚ի խաչ
և ՚ի բուրվառ և յաւետարան մեր‿
ձենալով, և կարդալով:

Մեղայ այ և թիւր խոստովանելով,
և զմեղս պատճառելով, խեթիւ և
ատելութբ և անմաքուր վարուք և
անմբ հոգւով զքս պատարագելով.
զմծ հայր հայհոյելով, զորդին այ
արհամարհելով, և զսբ հոգին թշնա
մանելով, և զանբարկանալին ած ՚ի
բարկութիւն շարժելով ՚ի վր այի և
մարդկան: Ահ որ յերևելիս ածա‿
պաշտ և աղօթօղ և պահեցօղ, և



՚ի

՚ի ծածուկ թերեհաւատ և ծոյլ, և յա̃մ բարեաց ունայն։ Երևելիս կուսան, և՚ի ծածուկ վավաշոտ։ Երևելիս ժիր, և՚ի ծածուկ թոյլ։ Երևելիս ս̃բ, և՚ի ծածուկ պիղծ։ Երևելիս պարկեշտ՝ և՚ի ծածուկ ագահ։ Երևելիս ողորմած, և՚ի ծածուկ անողորմ։ Երևելիս աղքատասէր՝ և՚ի ծածուկ աղքատատեաց։ Երևելիս առաքինի, և՚ի ծածուկ պղերգ։ Երևելիս գովելի, և՚ի ծածուկ պարսաւելի։

Արդ՝ զորս ասացից և կամ զո՞րս թուեցից. երբ ո՛չ եզր կայ և ո՛չ թիւ։ Մեղուցեալ եմ կարգիս զանձս ք̃է արդարս հ̃մրելով. և զայլս քամահելով։ Զտօնս ս̃եց ո՛չ մեծարելով։ և հայհոյութ̃բ մեղուցեալ եմ ա̃յ։ զանուն միայն ունիմ ք̃հնայի և ո՛չ զգործն, զօրինակն ունիմ և ո՛չ զճշմարտութի̃ն. քանզի ա̃մ անպատրաստութ̃բ. և անկարգութ̃բ կալով զմահուան օրն և զա

Նաչառ դատաստանին այ եւ զդժոխոց
ա՛հն եւ զարքայութե սէրն մոռացայ ·
կամնապաշտելով· հակառակելով, ան֊
հնազանդ լինելով։ ՚ի հեզութե եւ ՚ի
խոնարհութե փախչելով։ ըզծերսն
չպատուելով։ ըզծնօղսն չխրտելով։
ստահակութբ շրջելով, մեղուցել եմ։
Մեղայ այ եւ բարկացողութբ, ցաս֊
մամբ, սրտմտութբ, գազանաբար
յարձակելով, եւ զեղբարս խածանե֊
լով կագ եւ կռիւ առնելով, եւ յիշոցք
տալով, ՚ի չար կարծիս դատելով·
խռով կալով, ոխ հաշտութի առնե֊
լով։ եւ զհոգիս իմ կորուսանելով,
եւ բարս գազանի ունելով, եւ զանբան
անասունս անխնայ հարկանելով։ ՚ի
մարդկան սիրոյն օտարելով, պառակ֊
տումն առնելով, բանսարկելով, խառ֊
դախելով, խորամանկելով, երկմտե֊
լով, թերահաւատելով։ բազում տր֊
տունջ եւ նզովք հանելով։ զուր եւ
անիրաւ զրպարտելով։ քրթմնջելով,
շոգմոգելով։

Մեղայ մեղայ մեղայ, և նախանձ ունելով։ մախալով, դիմադարձելով, ոխակալութեամբ։ ատելութեամբ քինահաձութեամբ, չարութեամբ, նենգելով, քամահելով, զչարելով, սուտ մատնելով, բանսարկելով, արհամարհելով։ և զառաջնորդս եկեղեցւոյ և զվարդապետս, և զծերս՝ և զտղայս, և զայլոց խրատն սուտ առնելով, և զիմ սուտն խրատ։ զայլոց փոքր մեղքն մեծ համարելով, և զիմ բազում ծածկելով։ զայլոց շիւղն գերան կարծելով, և զիմ գերանն շիւղ։ զայլոց բարին չար ասելով, և զիմ չարն բարի՛, զայլոց լոյսն խաւար տեսանելով, և զիմ խաւարն լոյս։ զայլոց առաքինութիւն մարդահաճութիւն դատելով։ և զիմ մարդահաճութիւնս առաքինութիւն։ և յանդուգն լինելով ՚ի մէջ բանից անկանելով, լրբելով։ ՚ի խրատուց երես դարձուցանելով՝ և առջի ծերոց լռութեամբ ո՛չ կալով. և հրամանաց

և բանից նոցա՝ ոչ լսելով։ Ուխտ դը-նելով և ոչ կատարելով։ և անյու-սութեամբ ՚ի խորս տրտմութեան անկանե-լով զպատուիրանս Աստուծոյ արհամարհե-լով։ Սուրբ գրոց ունկն չդնելով։ ՚ի սուրբ հրեշտակէն իմմէ չակնածելով։ և՚ի բարեաց Թափուր լինելով։ ընդ-չարին խնդալով։ զբարեկամին ատե-լով։ զԹշնամեաց չսիրելով, զատե-

լին Աստուծոյ չատելով։

Ո՞րԹէ զորքանութիւն մեղաց կարացից յայտ բերել՝ որ բազում են քան զա-ւազ ծովու։ քանզի մեղուցեալ եմ Աստուծոյ և ագահութեամբ։ արծաթ սիրութեամբ. խաբելով։ աւելի առնլով և պակաս տալով։ վաճառասիրելով։ կծծելով։ զաղտ գողանալով։ յայտնի յափշտա-կելով, և զրկելով։ Աւելի ատանա-լով, աղքատին չողորմելով, առ օ-տարին չգԹալով։ զեղբարս չսիրե-լով, զկարօտեալսն չդարմանելով, ըզհիւանդն չտեսանելով, տկարին

չպատուա̂որելով։ զաղքատս արհա-
մարհելով, զհարուստն գովելով, կա-
ջողելոցն ծառայելով, ունևորացն
սուտ հաճոյս առնելով, աչառելով,
և մարդահաճոյ լինելով։ Սուտ եր-
դնելով, և զանձն ՚ի բարկութիւն
շարժելով։

Մեղայ մեղայ և քան զհող երկրի
ծանրագոյն մեղայ, քանզի մեղայ
ա̄յ, և Որկրամոլութ. ՚ի կերակուրս
և ըմպելիս՝ ցանկանալով։ ա̂ելի
առնլով՝ և անյագ ուտելով, զորո-
վայնս խճողելով։ առանց ժամու և
ժամ արձակի ճաշակելով. զպահսն
արհամարհելով, առանց մեծի հիւա̂ն-
դութ̄ե զգինին սիրելով. զմարմնոյս
դարմանն հոգալով. զորովայնս պաշ-
տելով, և խաչին քո թշնամի անուա̂-
նելով, և լուսա̂որչին կանոնաց սեղ-
րես լինելով։ Մեղուցեալ եմ իմ
ո̄ք կարգիս, ծուլութ., և հեղգութ.,
անժուժկալ լինելով։ տգիտանալով



զու

զուսումն ատելով: դատարկ կենա-
լով, զիւր գիրս ոչ կարդալով, քնով
դանդաղելով, և'ի ժամերն ծանրանա-
նալով, արթուն ոչ կալով, և պատմութե-
անց միտ ոչ դնելով: բազմախօսութիւն
առնելով: սաղմոսի ականջ ոչ դնելով
և կամ ձեռագործով, յապաղելով·
յօրանջելով· ձգտելով· ձանձրանալով:
և յոյժ ոչ երկնչելով: 'ի հրապարակ
նստելով՝ շատախօս լինելով, 'ի թա-
տերս և'ի ծաղրս լկտեաց հեշտանա-
լով և ծաղր անելով:

Մեղայ այ մեղայ մեղայ և պոռըն-
կական խորհրդով: գիճուբ, աղտե-
ղուբ, բղջախոհուբ, մամաշոտ ցան-
կուբ· զանազան և զազիր խորհրդով
'ի գիշերի' և'ի տուընջեան պէս պէս
կերպարանօք քնով և արթնուբ: և
արատ հոյելով: կատակ երգելով,
անամօթ լինելով: լրբելով, ցոփ խօ-
սելով, և տռփական մարմնաշարժուբ
զմիտս աղտեղելով, առ խզական և
առ

առ արուականս ։ առ անասնականն
ապականել խորհրդով մեղանչելով ,
և առ իմ մոլորական պատրանս , և
երազական փորձութեանց ։ Քնոյ և արթ-
նութեան . որ 'ի ժամու և տարաժամու
անկեալ է 'ի վերայ տառապեալ հոգւոյս ,
զոր չարին յօժարութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ ։
Այլ արդ՝ աղաչեմ յայտնել հրապարա-
կեցի զորպիսութիւն մեղաց իմոց առաջի
տեառն և ապաշխարեալ զղջացեալ եմ
յանձն , և եկեալ 'ի խնդիր թողութեան
սխալանաց իմոց ։

Այլ դու հայր մեր և սուրբ տէր հայցեմ
զգթութիւն Աստուծոյ . և շնորհեա քաւութիւն
ինձ յԱստուծոյ , հրամանաւն՝ զոր ունիս
'ի քէն Աստուծոյ ։ Որում փառք և
գոհութիւն և" ։

Աղօթք արձակման Արարեալ մեծի րաբունապետին Գրիգորի . 34 .

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած ,
և թողութիւն շնորհեսցէ Աստուած յան-
ցանաց քոց խոստովանեցելոցն և մո-



ռա

ռացելոցն . և ես կարգաւ քահա-
նայական իշխանութեամբ և հրամանաւն
Աստուծոյին, թէ զոր արձակեցէք յերկ-
րի՝ եղիցի արձակեալ յերկինս .
նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն
մասնակցութենէ մեղաց քոց 'ի խորհր
դոց 'ի բանից և 'ի գործոց՝ յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:
Նաև դարձեալ տամ ըզքեզ 'ի խոր-
հուրդս սրբոյ եկեղեցւոյ · զի զոր ինչ
գործեսցես բարիս՝ եղիցի քեզ 'ի
բարեգործութիւն և 'ի փառս հան-
դերձեալ կենացն .

Ամէն:

---

Աղօթք դարձելոյն 'ի զղջումն ապաշխարութեան:

Օ

Անսկիզբն Աստուած և անհասանելի՝
բայց զայս սրտի իմոյ բանիւ
գիտութեան քո՝ բաւական լինել
գոհանալ զանուանէ քումմէ · գովել
և փառաւորել զքեզ և արժանաւորս
գնալ 'ի ճանապարհս քո:

Դատաւոր արդար՝ երկայնամտեա՛
առ իս բազմամեղս քոյով մարդասի-
րութեամբդ • զի եղկելի եմ մեղօք՝
զեղխեալ անօրէնութ՟բ • և զազիր գի-
ջութ՟բ զմարմինս իմ ապականեցի:
Որ էիր յառաջ էականութ՟բ ա՟ծ ընդ
հօր՝ ընդ մեզ հաճեցար բնակիլ ընդ
հողեղինացս • և ընդ մարդկան շրջե-
ցար ը՟ն մեղաւորացս • Թո՛ղ տ՟ր զմեղս
իմ և թեթևացո՛ զծանրաբեռնեալս •
Ժտելով հայցեմ ՚ի քէն, զի ժամանակ
է ապաշխարութ՟ե: ՚Ի քէն հայցեմ
բազում ողորմ՟ տ՟ր աղբիւր կենաց՝
լուսաւորեա՛ զաչս սրտի իմոյ լուսով
գիտութ՟ե քո: Յի՛սս Տ՟ի ք՟ս • ծագու-
մն անճառելոյ լուսոյ • կեանք՝ ո-
րոց սիրեն զքեզ • կերակուր անսպա-
ռելի • կենդանութ՟ի յաւիտենից:
Հրով հոգւոյդ ս՟րյ՝ հալեա՛ զպաղուծն
ձմեռնացել սրտի իմոյ • որ ձուլեալ է
եղկելի գործօք անօրէնութեան:
Ուղղեա՛ քո ա՟ծային զօրութ՟դ զու-

նուղ

Նուիրեալ խորհուրդս իմ հար ուղե-
կանին սատոր կենացս։ Ո՛րպէս ճշմար-
տու է և ճառագայթատու՝ մերկեա՛
յինէն զխաւար մթացեալ մեղացս։
Զեղկելիս մեղօք յիշեա՛ քո ո̃ծու-
թեամբդ յահագին աւուրն յայն-
միկ ահեղ մեծի դատաստանին։
Ալեկոծելոց նաւահանգիստ՝ և լի-
ութի ունայնացելոց արդարութե̃ և
ունողիս զանօրէնութի̃ հար գործօք։
Դու հարիս հարհարեալ է անձն իմ․
զինչ արարից մեղուցեալ անձամբս․
պէս պէս ախտիւք պղծեցայ յանա-
ռակութե․ զրկեցայ 'ի հայրենական
լուսոյն․ ջնջեցի զձեռագիր որդե-
գրութեան կենաց ջեռուցի զհուր
յաւիտենական։

Ա̄ սրտիւ կարդամ առ քեզ՝ ամե
նաբերդ ո̃ծ․ վտանգելոյս օգնական․
վիրաւորելոյս բժիշկ․ տեղի տարա-
կուսելոյս․ կորուսելոյս խնդրօղ․ մո-
լորելոյս և գերելոյս դարձուցիչ․

ապաւէն ա՟մցուն որք կարդան առ
քեզ: Տո՛ւր տառապելոյս և տարա
կուսելոյս գերելոյս 'ի պատամնայէ
զմեծ քո ողորմութիւն:

Ա՛հա հասեալ եմ 'ի դուռն մահու
չարաչար գործովք իմովք. զանձս իմ
'ի վեր համբառնամ առ բարձրեալ
ա՟ծ և բարերար. հայցեմ 'ի քէն
բա՛ց զդուռն ողորմութ՟ե մեղուցեալ
հոգւոյ իմոյ. ո՟պ բացեր աւազակին
զդուռն դրախտին քո. և մի՛ ամօթա
լից դարձուցաներ զիս 'ի քո առատ
ողորմութ՟է. զի գին եմ ս՟ր արեան քո.
յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ ա՟ծ:

Որ անեղ և անսկիզբն ես՝ անստեղծ
և արարիչ ա՟մ արարածոց. որ ո՛չ
աշխարհս տանել զքեզ կարէ, և ո՛չ
երկինք բովանդակել կարեն. 'ի վե՛ր
ես քան զերկինս և անբա՟ւ քան ըզ
ծագս. երևելիք և աներևոյթք բո
վանդակեալ են առաջի քո:
Դու տիրես ա՟մցուն և հրամանա՟

քո կատարելին ըստ արարածք։
Դու աղքատացուցանես և դու մե-
ծացուցանես · դու սպանանես հար-
կանես և բժշկես։ Դու ես Աստուած իմ
և փրկիչ վտանգելոյս 'ի սատանայէ · ա-
ռողջացուցիչ հիւանդիս մեղօք · ըն-
դունող աղօթից և կատարիչ խնդրուա-
ծաց։ Նայեա՛ տէր 'ի պաղատանս իմ
և ընկա՛լ զիս մարդասիրութեամբ քո։
Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս ·
և մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաներ
զիս · զի դու ես տէր և արարիչ · հայր
և ստեղծիչ · և ես առ ով երթիցեմ
զի օգնութիւն իմ 'ի քէն է։
Հայեաց 'ի պաղատանս իմ · և ընկա՛լ
զիս մարդասիրութեամբ քո · զի քեզ մե-
ղայ և զքեզ աղաչեմ և զքեզ խոստո-
վանիմ։ Մեղայ յերկինս և առաջի
քո · մի՛ ընդ դատելոյն տանջեր զիս ·
և մի՛ ընդ դատապարտելոյն պատու-
հասեր։ Այլ ըստ կամարարս կամաց
քոց ընկալցիս · և ընդ պահօղս պատուի-


րա

րանաց քոց պահեա՛ զիս · զի Թէ ա_
ւանց ներքոյ ըզբազում յանցանս
իմ քննես՝ ապա ընդունօղն է ինձ
խոստումն յարուցէ · և հուր գեհեննին
է ինձ ժառանգուԹի՛։ և Թէ զդա_
տապարտուԹիս իմ և զանդեպ զայլ
անօրէնուԹիս իմ խնդրեսցես յինէն,
ապա երանեմ չեղելոյն յորովայնէ։
Հայեա՛ տէր 'ի պաղատանս իմ և ըն_
կա՛լ զիս մարդասիրուԹե՛դ քո։
Ողորմեա՛ ինձ ո͞պ քանանացւոյն,
ո͞պ պոռնկին, ո͞պ մաքսաւորին · և
գԹա՛ յիս ո͞պ յանառակ որդին · և ո͞պ
աւազակին շնորհեա՛ բազում յան_
ցանաց իմոց զԹողուԹիւն։
Ընկա՛լ զիս որ͞պ զհայհոյիչն և զհա_
լածիչն · փարատեցո՛ զխաւար մե_
ղաց յաչաց իմոց։ Բա՛ց զաչս իմ
զկցեալս երկնային ցանկուԹե՛ երկ_
նային լուսովդ · և բժշկեա՛ զվիրաւո
րեալ լեզուս իմ 'ի բանբասանաց։
Արբեա՛ զսիրտ իմ 'ի չար և 'ի պիղծ
խոր

խորհրդոց . վա՛ զի քեզ ցանկամ
տեառնդ իմոյ բարերարի և բազմա_
գութի իմոյ արարչդ:

Ո՛չ յաւիտենական ամօթոյն ամա_
չեցուցաներ զիս . և մի՛ ահեղ դա_
տաստանաւ՛ն դողացուցաներ:

Ո՛չ տիեզերական հրապարակաւ՛ն
զիս յանդիմաներ . և մի՛ աններելի
տանջանացն մատներ:

Ո՛չ սոսկալի հրոյն պատուհասեր .
այլ փրկեա՛ զիս ՚ի հրացեալ հնոցէն,
՚ի հրահոսեալ գետոցն և յորդանացն
չարաթիւնից , ՚ի հանապազորդ նե_
ղութենէն և ՚ի կրճտել ատա_
մանցն :

Եւ բնակեցո՛ զիս ընդ կամարարըս
կամաց քոց՝ յանանցական
կեանն :

Զի ընդ նոսին արժանի եղէց գոհա_
նալով փառաւորել զՀայր և զՈրդի
և զՍուրբ Հոգին .
Ամէն:

Զօրաւոր Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի: վասն արեանն ծն վերացին ծմ հեծութիք, և հասցեն ողորմութիքն։

## Գլուխ ԼԵ

Երգական արդար ճառագայթ օրհնել: Լուսոյ կերպարանի: Փառաց անձկունի: Բարձրեալ անքննելին: Զօրեղ անպատում: Բարւոյ բերկրութի: Յուսոյ տեսութի: Գովեալ երկնաւոր: Թագաւոր փառաց: Քո արարիչ: Խոստովանեալ կեանք:

Ո՛չ արդ՝ զթերութի վրիպանաց բազմախառն ձայնի եղկելւոյս՝ ամենազօրդ բանի լցեալ՝ մատուցեալս յաղերս համառօտ հօր քում բարձրելոյ Որ վասն իմ՝ ի փորձ եկիր անխծից, կերպարանեալ զիմ նմանութի, ամենեւին կենաց օրհնութի: Սերնդ եւ ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից: Զի թէ յանձն առեր մեռնիլ վասն իմ անդ և ո՛ր բոլորեցուն, որչափ հաճեսցիս

առա

տուաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել. ընդ իմ պարտաւորիս մեղա աղօթելով ազգականցն մարմնոյդ՝ առելոյ ՚ի մէնջ առ համապատիւդ քո հայր։

Այս վշտ արեանդ պատուականի մեղա մատուցելոյ ՚ի հաճութիւն կամաց ա ռակելոյդ, բարձցին վտանգք մեղուցել դատապարտելոյս։ Խզեսցին պարտիքն։ Ապաքինեսցի ամօթն։ Մոռասցին պատկանքն։ Բարեգործեսցին դա տակնիքն։ Ամոքեսցին որդունքն։ Կերասցի լալն։ Համբարձեսցի կրր ճոփն ատամանցն։ Սպառեսցին ողբքն։ Հասցեն արտասուքն։ Մերժեսցի սուգն։ Հալածեսցի խաւարն։ Կա նեսցի հուրն ատանելի։ Հերքեսցին տանջանարանքն բաղմօրինակք։

Ակեսցեն գթութիւք կամօղիդ և պար գեւողիդ կենաց ամենից։ Թագեւ ցէ լոյսդ։ Երագեսցէ փրկութիւնդ։ Հասցէ օգնութիւնդ։ Ժամանեսցէ այցե լութիւնդ։ Կանխեսցէ ցօղդ ողորմութեան։

Յառաջեսցէ՛ արբուսցէ՛ զանդա-
տանս պապքեալ անկեալ ոսկերացս՝
թշուառութեամբ ՚ի վիհն մահու ։
Ծաղկեսցէ՛ պտղաբերեսցէ՛ բաժա-
կդ երկնաւոր արեան կենարարիդ՝
զերկիրս խնամեալ յաւուրն լուսոյ։
Որ անծախապէս միշտ պատրաստի՝ յիշա-
տակ կենաց փրկութեան հոգւոյ ննջեցելոց։
Զի տէրն մահուան հոգւոյս մարմնովս
մեղաց՝ շնորհօք քո գթած ՚ի քեզ զօ-
րացեալ՝ քև նորոգեցայց՝ զառեալ
՚ի մեղաց անմահ կենդանութեան ՚ի յա-
րութեան արդարոց՝ հօր քում օրհնեցելոց։
Ընդ որում քեզ փառք՝ և հոգւոյդ
սրբոյ բարեբանութիւն վայելչական գո-
հութիւն՝ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն ։

Տէր յաւիտենական, բարերար և ամենից։ Ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. Կեանք ՚ի մահու և լոյս ՚ի խաւարի. Յոյս անյուսից, և երկայնմտութիւն տարակուսելոց։ Որ ամենարուեստ իմաստութբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու։ Անմուտ ծագումն և անմուտ արեգակն։ Քանզի ոչ զօրէ ծածկել զխաւարս տրուե քո խաւար գիշերոյ։ Որում կրկնի ծունր երկրպագութե ամ եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։ Որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նց։ Տէր իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ յս քս ածդ ամի։ Սբդ՝ հանգուցեալ ՚ի հոգիս սբց։ Մխիթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց։ Որ գիտես զամ յառաջ քան զլինել նց. առաքեա

զպահպանողական զօրութիւն աջոյ քոյ ·
և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և՛ի
դիւէ չարէ՛։ Ո՞վ զի զայրշտեկ սոսկա-
լի և սուրբ քո անուանդ՝ միշտ համբու-
րեալ շրթամբք հոգւոյ ըղձութե՛ն շնչոյ,
կեցից պահպանեալ ընդ այնոսիկ որ
կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ։ Նո՛ի
դրօշմէ խաչի քոյոյ նշանիւ՝ զոր ած-
ային արեամբդ քո ներկեալ նորոգեցեր
և՛ի նոյն շնորհ որդէգրութեն զմեզ մկըր-
տեցեր , և՛ի փառս պատկերի քո նը-
կարեալ յօրինեցեր , այսու պարգևօք
ածականօք , Ամաչեսցէ՛ սատանայ։
Քակտեսցին մեքենայքն։ Բարձցին
որոգայթքն։ Պրտեսցին միրուցքն
Պակասեսցին զէնքն սայրասուրք։
Մերժեսցի՛ մէգն։ Փարատեսցի՛ խա-
ւարն։ Մեկնեսցի՛ մառախուղն։ Բա-
զուկ քո հովանասցի՛, և աջ քո կնքես-
ցէ՛։ Սո՛ զի գթած ես և ողորմած. և
անուն քո կոչեցեալ է ՚ի վերայ ծառայից քոց
Նու քեզ ըն հօր՝ հոգւոյդ սբյ փառք
իշխանութի և պատիւ։ Այժմ և"։



Սաղ

Մաղթանք առ տր Ածածինն՝ և առ ամ Ծըսն տյ-
յետ եկեղեցին ասա։

Լ.

Ածածին ամենօրհնեալ. ըզ
պաղատանս մեր ընկա՛լ.
՚ի հանգըստեան ժամու
հասեալ. առ քեզ գո-
չեմք անձամբ թախ ծեալ։

Բանին կենաց բարձող ե ղեր.
զԱծ մարմնով պարագրե ցեր.
առ բանն Ած բարեխօս լեր.
՚ի փորձանաց ըզ մեզ փըր կել։

Գովեալ ես դու փայտ փըրկութե.
ամենօրհնեալ յաղթող նը շան.
՚ի գիշերիս ըստուերս կան.
ծածկեա մեզ զըլոյս արփիա կան։

Գոլան ՚ի քէն գունդք խաւարին.
ամենահըրաշ զէն արար չին.


ըզ

ըզ մեզ պահեա՛ շնորհիւ քոյ ին;
՚ի գիշերիս աղջամըղ ջին:
Երկոտասան սբ առա քեալք·
եօթանասուն աշակեր տեալք·
յանձնառու լուսոյն լոյս անձանեալք·
որթոյն կենաց ողկուզաքե րեալք:
Ո՛ ձեզ աղաչեմք առատասա՛ա գին·
և պաղատիմք կողկողա գին·
վանիչ լերուք դիւաց գըն դին·
ոչ մերձենալ առ մեզ չա րին:
Նորին ընտրեալք բանին կե նաց·
գումարք դասուց տեսանո ղաց·
որք զապագայն ժամանա կաց;
գուշակեցիք հոգւով շնոր հաց:
Ընդ մեզ լերուք աղօթա կից·
որք աստուծոյ էք խօսա կից·
փրկել ըզ մեզ ՚ի վտան գից·
՚ի յարթնութե̄ և յերա զից:
Թագաւորին երկնա՛ւո րի·
երկրպագող ՚ի յարգան դի·

մեծ կարապետ տ̅ռ ամլոր  դի·
միջնորդ կենաց և օրի  նի:
Ժամանեա՛ մեզ 'ի յօգնու  թի̅·
զի մի՛ մնացուք 'ի փորձու  թի̅·
մաքուր մարմնով լինել 'ի  քուն·
արդար հոգւով մնալ առ  թուն:
'Ի քէն հայցեմք արտասուա  գին·
նախավկայ տ̅ն առա  ջին·
տ̅ռ ստեփաննոս բացող զեր  կին·
տեսող զյ̅ս յաջմէ ծնո  ղին:
Լե՛ր բարեխօս արեամբ քոյ  լին·
տալ մեզ հանգիստ 'ի յանկո  ղին·
արթուն լինել յառաւ̂օ  տին·
բարեբանել զլոյսն անքըն  նին:
Խնդրեմք 'ի քէն հայր պատ̂ուական
լուսաւորիչ ազգի մարդ  կան·
տ̅ր տ̅ր գրիգոր պետ պարթեւ  եան·
լե՛ր մեզ պարիսպ և պահա  պան:
Ծնողաբար 'ի մեզ գը  թա՛·
զցրուեալ որդիքս քո ժողո  վեա՛·


յու-

յուրախութիւն ըզ մեզ կո չեմ·
և'ի բարին առաջնոր դեմ։
Կենդանարար թագաւո րին·
դուք ճշմարիտ զինուորք նը մին·
որ մարտիրոսք վկայք փըրկ չին·
որք յաղթեցիք ըզթշնա մին։
Զօրն լուսոյ միշտ մաղթե ցէք·
զորդին ընդ հօր աղաչե ցէք·
հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէք·
և'ի բանսարկուէն զմեզ թափեցէք։
Զինափայլ երամք ընտ րեալ·
Ճգնաւորաց դասք երա նեալ·
Թռչնոց երկնից էք նըմա նեալ·
յայրս և'ի ծերպըս բընա կեալ։
Պօղեալ հոգւոց մեր 'ի մար մին·
ըելուք պարխալք ընդ դեմ չա րին·
զի յաղթեցուք հակառա կին·
խորտակելով ըզ զէնս նո րին։
Ճ'րագունք վառեալ լուսով'ի լի·
որ կուսանաց դասք երա մի·


ար

արժան եղեալք առագաստ տեին ·
և անթառամ պսակ կեին :
Մ՛եզ բարեխօս լերուք սի րով ·
առ տէր քրիստոս աղերսա լով ·
՚ի փորձանաց զմեզ փրկե լով ·
յանչէջ հրոյն ազատե լով :
Յանեղ լուսոյ ածոյ լին ·
լուսոյ առեղծեալք բանին՝ նո րին ·
զարդարեցայք հոգւով նոր հին ·
դասք լինելի զօրք երկնոյ լին :
Նախախնամել՝ զմեզ փութաջիք ·
և յօգնութիւն առ մեզ հա սիք ·
որ յաստուծոյ հրամանն ա ռիք ·
ով ճշմարիտ մեր սիրե լիք :
Շ նորհատու ազգի մարդ կան ·
տէր մեր քրիստոս անքննա կան ·
ըզ մեզ պահեա՛ միշտ անսա սան ·
աստի մինչ յօր քո գալըս տեան :
Ողորմութիւն մեզ պարգե ւեա՛ ·
զհիւանդ հոգիս մեր բըժըշ կեա՛ ·
՚ի

’ի բանսարկուէն ըզմեզ փըր կեա՛.
և ’ի չարեաց անփորձ պա հեա՛։
Զար իշխանքըն խաւա րին.
որք ընդ ծառայս քո մարտըն չին.
քո նըշանաւ սըրբոյ խա չին.
աներևոյթ կործանես ցին։
Պարգևիչ բարեաց մարդ կան.
ամենատուտ յամենե սեան.
պատրաստեցո՛ մեզ անխա փան.
զպէտըս հոգւոյ և մարմնո կան։
Տուր շընորհեա՛ ինձ արտասըւաց.
զի լըւացից զգործըս չա րեաց.
արժան եղէց քոց հարսա նեաց.
ընդ իմաստուն սուրբ կուսա նաց։
Ուահ բարի իմ տէր մի՝ տուս.
և հաց կենաց տուեալ հօ գւոյս.
առաջնորդեա՛ մոլորե լոյս.
և կերակրեա՛ զմիտս ընդ մարմ նոյս։
Արբեա՛ զհոգիս յաղտոյ մե ղաց.
’ի զանազան չար փորձա նաց.


տուր

տու՛ր ինձ գընալ ըստ քո կա մաց·
զի արժանի եղէց փա ռաց։
Վերանորեաց զիս Թըշնա մին·
այն որ չկամի զկեանս մարդկայ ին·
զիս բըժըշկեա տէր երկնայ ին·
լուսաւորեա լուսով քոյ ին։
Տրտմեալ հոգւոյս լե՛ր ըսփո փիչ·
ցաւած մարմնոյս լե՛ր դարմա նիչ·
մոլոր մըտացըս լե՛ր ուղ ղիչ·
ամենառատ բարեաց տը ւիչ։
Րամից սըրբոց աղաչա նաց·
իննեակ դասուց հրեղէն զօ րաց·
առաքելոց քոց սիրո ղաց·
մարգարէից տեսանո ղաց։
Ցանկալի հայրապե տաց·
և երջանիկ վարդապե տաց·
արիւնաներկ մարտիրո սաց·
և գերագոյն ճգնաւո րաց։
Ւ խուսապըսակ սրբ կուսա նաց·
որք փեսայիդ սպասեն փա ռաց·

և ամենայն մաքուր ան ձանց·
հետևողաց քոյին կա մաց:
Փրկեա զհոգիս 'ի տանջա նաց·
զազրատեսիլ յանքուն որ դանց·
լսել տուր զձայն քո աւե տեաց·
զոր խոստացար քոց սիրո ղաց:
Քեզ հօրդ փառք միշտ առաքեմք·
զորդիդ ընդ հօրդ դաւա նեմք·
ըզ հոգիդ սուրբ բարեբա նեմք·
երրորդութեանդ երկրպագեմք:

Ամէն:

---

Այ Հօր՝ ձեռնտուութեն օգնա կանութեն և յաջողութեն գոհութի և փառս մատուցանեմք՝ ընդ Որդւոյ և ընդ Սբյ Հոգւոյն: Որ ետ կարողութի մեզ նուաստիցս՝ ըզսոյն զայս բարեխօսս մեղուցելոց (այսինքն ըզտետրակս Աղօթից Սբյ Երանելոյն Եփրեմի) ներկայ տա

նել ՚ի ձեռն տըպագրեցման։ Որք
կամին սովորա՟ մատչիլ և յանդիման
լալագին դիմօք առաջի աԹոռոյ շնոր
հացն ա՟յ. և լսել զերանաւէտ ձայն
նր՟. Թէ մի՛ լար գերլի՝ բազմաց ողբա
լի. այլ արի՛ առ զմխիթարական հոգևոյդ
քում զկենդանուԹի՝ զոր չարաչար
մեղօքդ մեռուցեր։

Այլ և՝ որ զամ ընԹեռնու՝ ոչ կարօ
տի Չերոյն սեղանոյ առ ՚ի բուժիլ. այլ
յինքենէ բղխեալ Ջուր արտասուաց
լինի անապատն շնորհաց և բուժէ՛
զախտս հոգեկան. ընդ նմին և ըզ
ցաւս մարմնական։

Եւ զինչ ասելի է զաղօԹից. զի աղ
օԹիցն գովուԹի ՚ի սրբցն՝ անդր քան
զամ՟ է. որով ինքեանք փայլեցան ՚ի
մարմնի՝ զանմարմնոցն բերելով յին
քեանս զնմանուԹի. և հաճոյացան այ՟։
Ընդ որս և զմեզ մարդասէրն ած՟ քա
ւեալ ՚ի մեղաց և արդարացուցեալ
՚ի ձեռն աղօԹից՝ փոխեսցէ՛ յար


քայ

քայութ որդւոյ իւրոյ սիրելւոյ տն՟ մերոյ յի՟ քի՟։ Որում փառք յաւի-տեանս ամէն։

Նա՛ արդ՝ մինչ ընկալնոյք զմխիթա-րութիւն ինչ հոգւոյ ձերոյ 'ի յընթեռ-նուլն զսբ՟ զաղօթս, յիշեցէք 'ի քս՟ զցանկացօղ աղօթիցս՝ զտպագրօղ պարտաւոր անձն իմ, յանկնայ գլխ-ղէն ապաւշխեցի, արապօղլի կոչեցեալ հանգուցեալ մահտեսի տրատուրի որդի՝ յօհաննէս. և զհարազատակից զորդեակն իմ, զկապարեալս շարա-բարդօղ՝ զտէրցու պօղոսն. որ եմք պատրաստական ծառայ ձեր տմցըն։ Նաև՝ զաշխատաւոր գործարանիս մերոյ զմրազարկ, մանազկերտցի հան-գուցեալ տր պօղոսի որդի զտէրցու կիրակոսն։

Յորմէ և դուք լինիջիք յիշեցեալ 'ի տնէ մերմէ, այցելութեան յաւուր յայտնութեան նորին. ամէն։

ՎԵՐՋ.



Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна

1058

I 1840 1185